Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-830[1]-18.02.2010-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 54-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Ամփոփաթերթիկ
ՀՀ Ազգային Ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված
««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (փաթեթով՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», “Հայաստանի փրկարար ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի) կապակցությամբ առաջարկությունների

առաջարկության հեղինակ	հոդված	բովանդակություն	եզրակացություն
««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 8, Օրենքի 19-րդ հոդված	Օրենքի 19-րդ հոդվածի «“դ)” կետի» բառերը փոխարինել «“դ) և դ1)” կետերի» բառերով:	Ներառված է, պայմանավորված է 19-րդ հոդվածը նոր կետով լրացնելու հետ
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 9, Օրենքի 22-րդ հոդված	Օրենքի 22-րդ հոդվածի՝ 1-ին մասի գ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) տեղեկանք ընտանիքի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում հաշվառված բոլոր անձանց մասին». 1-ին մասի զ) կետը “մահացած երեխայի,” բառերից հետո լրացնել “մյուս երեխաների, չափահաս զավակների” բառերով.	ներառված է, ապահովում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կիրառումը, ինչպես նաև լուծում է իրավակիրառական պրակտիկայի շրջանակներում առաջացած որոշ խնդիրներ
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 10, Օրենքի 23-րդ հոդված	Օրենքի 23-րդ հոդվածի. 1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. “Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ (այսուհետ՝ երեխայի խնամքի նպաստ) ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող)՝ մինչև երեխայի երկու տարեկանը լրանալը:”.	ներառված է, լուծում է իրավակիրառական պրակտիկայի շրջանակներում առաջացած որոշ խնդիրներ

ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 11, Օրենքի 24-րդ հոդված	Օրենքի 24-րդ հոդվածի՝ 1. 1-ին մասի “գ)” կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «գ) տեղեկանք ծնողի գտնվելու վայրում (հասցեում, կացարանում) բնակչության պետական ռեգիստրում մինչև 2 տարեկան երեխայի հաշվառված լինելու մասին». 2. 1-ին մասի “դ)” կետում «աշխատավայրից» բառը փոխարինել «գործատուից» բառով. 3. 1-ին մասի “դ)” կետից հետո լրացնել նոր “դ1)” կետ հետևյալ բովանդակությամբ. “դ1) երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողին՝ իր կրտսեր հաջորդ (այսուհետ՝ կրտսեր) երեխայի համար երեխայի խնամքի նպաստ նշանակվելու դեպքում՝ տեղեկանք գործատուից՝ կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի մասին.”. 4. 4-րդ մասից հետո լրացնել նոր 4.1 մաս հետևյալ բովանդակությամբ. “4.1 Երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողի՝ կրտսեր երեխայի համար երեխայի խնամքի նպաստը նշանակվում է կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության օրացուցային վերջին օրվա ամսվան հաջորդող ամսվա մեկից:”. 5. 7-րդ մասում «տեղեկանք բնակության վայրից և աշխատավայրից» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասի գ) և դ) կետերով նախատեսված տեղեկանքները» բառերով. 6. 10-րդ մասի “գ)” կետի “աշխատանքի վերադառնալու” բառերը փոխարինել “աշխատելու” բառով:	ներառվել է, ապահովում է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի կիրառումը և հստակեցնում է փաստաթղթերի ներկայացման ժամկետներ, սահմանում է տեղեկատվության հավաքագրման արդյունավետ մեխանիզմ

		7. 10-րդ մասի “զ)” կետը “երեխայի” բառից հետո լրացնել “կամ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի” բառերը:	
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 13	Նախագծի 13-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «ՀՈԴՎԱԾ 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:»	հստակեցվել է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը
«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:»	հստակեցվել է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը
“”Հայաստանի փրկարար ծառայության մասին” ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծ			
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:»	հստակեցվել է օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը